

ԿՐՈՆԱԳՐԻՏԱԿԱՆ

ՆԻԿՈԼԱՅ ԲԵՐԴՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ (ՄԻՍՏԻԿԱ) ԵՎ ԿՐՈՆ*

Ամեն ինչից առաջ ես կուգենայի մերժել կրոնի բարոյական, կանտա-տոլստոյական ըմբռնումը, որը բարոյականության մեջ է տեսնում մարդկային բնության բուն էությունը, այն, ինչ մարդուն մարդ է դարձնում՝ Աստծու պատկեր և նմանություն։ Մարդկանց մի հսկայական զանգված բարոյականությունը կրոնականության հետ է շփոթում, կրոնի միակ պատգամը բարոյական սխրանքի մեջ է տեսնում, կրոնականության աստիճանը բարոյականությամբ է չափում և բնությամբ ոչ բավականաշափ բարոյական մարդկանց կրոնի իրավունքը չեն ճանաչում։ Կրոնի բարոյականությունը հիմնված է միանգամայն թյուր հոգերանության և բնազանցության** վրա, մարդկային բնության ամրողական լրությունից բարոյականության վերացարկման և այդ վերացարկված մասին ընծայված ինչ-որ առանձնահատուկ, բացադիկ ճշանակության վրա։ Բարոյականության սխալը շատ հարազատ է ուացինալիզմի սխալին և նույնիսկ կապված է նրա հետ։ Մարդկային հոգու ճշմարիտ հոգերանությունն ու բնազանցությունը մարդկային բնությունը պետք է ըմբռնի գերագույն կենտրոնի հարաբերությամբ նրա օրգանական կաշկանդվածության և ստորադասության մեջ, այսինքն՝ այն գերբարոյական ճանաչի, ինչպես և գերուցինալ, հատկապես գերբարոյական և ոչ թե ապարարոյական, որն իւացինալիզմի նման սխալ կլիներ։ Հոգերանությունը, որը հոգու էությունը նրա բոլոր առանձին, անջատ տարրերից շատ ավելի խորը տեսնելով՝ մասերն ամրողի տեղ չի ընդունում, նախապատրաստված է այս գիտության ողջ զարգացմամբ։ Օրգանական հոգերանությունն արդարացնում է միստիկան, որովհետև միստիկան թշնամի է միայն վերացական տարրերը (միտքը, կամքը, զգացումը, ապրումը) էության տեղ ընդունող հոգերանությանը։ Մարդկային բնությունն իր էությամբ բարոյական չէ, մեծավ մասմբ բարոյական չէ, բայց ոչ էլ հակաբարոյական է, քանի որ այն միստիկ և օրգանական է, որովհետև նրա հիմքը բարոյականությունից անհամեմատ շատ ավելի խորն է։ Բարոյականությունն ընդունելի է միայն իրեն ստորադաս գործառնություն, իրեն գերագույն միստիկ օրգանիզմի գործառնություն, այդ դեպքում այն բացարձակ ճշմարտության մասն է։ ինքնաբավ, վերացական, չափազանց մարդկային բարոյականությունը չար սկզբունքի է վերածվում, առաքինության գալթակղություն

* Թարգմանությունը կափարված է Հ. Ա. Բերդյաև, Новое религиозное сознание и общественность аշխавкотиւնից, գլուխ III, Սոսկվա, 1999 թ., էջ 26-39:

** Մետաֆիզիկա [թորգմ.]

Է հանդիսանում: Կրոնի մեջ բարոյախոսների սխալը ոչ միայն թյուր հոգեբանության մեջ է արմատավորված, այլև՝ մեղանչումի մասին կեղծ ուսմունքի: Բարոյականցնող կրոնական գիտակցությունը մեղանչումը «բարոյական» իրողություն, բարոյական օրենքի զանցառում է նկատում, այդ իսկ պատճառով բարոյականության մեջ է մարդկության համար միակ փրկությունը փնտրում: Սա ամենին կրոնական հարցադրում չէ, չափից ավելի սահմանափակ - մարդկային հոյեցակետ է: Մեղանչումը կրոն - բնազանցական իրողություն է և ոչ թե բարոյական, այն անշափակցելիորեն ավելի խորն է բարոյականությունից՝ մարդկային հոյեցակետում: Մեղանչումը կրոն - բնազանցական իրողություն է և ոչ թե բարոյական, այն անշափակցելիորեն ավելի խորն է բարոյականությունից՝ մարդկային հոյեցակետում: Մեղանչումը կրոն - բնազանցական իրողություն է և ոչ թե բարոյական ըմբռնումը չափազանց մարդկային և ուացիոնալ է, ոչ չել միստիկ: Աստծուց աշխարհի անկումը, կրոն - բնազանցական նեղքումը, կեցության խորհրդավոր անկումը անբարոյականություն, բարոյական օրենքի պարզ զանցառում կոչելը գործեն ծիծաղելի կիմել: Բարոյական, ուացիոնալիզացված նորմեր այն նախնական միստիկ տարերքի մեջ բնավ էլ չկային, որում Արարչի և արարչագործության միջև երկապառակություն ծագեց, որում արարածն ապստամբեց Արարչի դեմ: Այս երկապառակությունը՝ նախասկզբանական ազատության այս ողբերգությունը մարդկային տկար բարոյականությամբ չի հաղթահարվում, այլ՝ համաշխարհային պատմության մեջ Փրկչի կողմից աշխարհի փրկագնումով հայտնված Աստծու երրորդութենական միստիկ դիալեկտիկայով: Բարոյականությունն իբրև փրկության միակ ճանապարհ՝ Աստծու հետ անպայման միավորություն չէ, այն ինքնուստիմքյան ոչինչ առաջ չի բերում, կեցության էության մեջ ոչինչ չի փոխում և անատվածյան կարող է լինել: Աշխարհի պատմությունն անաստվածյան, մեռած օրենքը կենդանի Աստծուց բարձրդասող բարոյականությունն է ճանաչում, աշխարհի անկումն Աստծուց օժանդակող, մարդուն աստվածացնող բարոյականությունը: «Բարոյական» մարդկան հաճախ ամենածայրահեռ և սարսափելի անաստվածներն են, ոչ միայն մտքով, այլև իրենց կամքով և սրտով են խաչում Աստծուն հանուն բարոյականության: Որքան սարսափելի է դպիրների և փարիսեցների բարոյականությունը, որքան հաճախ են բարոյախոսները լինում դաժան և կեղծավոր: Վերացականորն էլերցված, իր Սկզբնաբրյուրից կտրված բարոյականությունն այս աշխարհում միայն օրինական կարգուկանոն է հաստատում և մինչև այս աշխարհի առնչությունն իր հմաստին վեր չի խոյանում, դեռևս աշխարհի մասերը համաշխարհային Լոգոսի հետ չի միավորում: Բարոյականության մեջ երկրի ստորին բանականությունն է տնտեսվարում, ոչ թե՝ վերինը: Բարոյականությունն իբրև այդպիսին, իբրև հատուկ սկզբունք, փորձում է չարի և բարու հիմնախնդիրը, հիմնախնդիր, որ կրոնա-բնազանցական է, բարու և չարի ակունքներից, աշխարհի հմաստից անկախ լուծել: Այս առումով շատ է մեղամեծ հիմնախնդիրը և շատերին թունավորել, և նուզնակ Վլ. Սոլովյովի նման մարդիկ կրոնի մեջ բարոյականության գայթակղութ-

յանը տրվեցին և հաճախ են օգտագործում «կրոնա - բարոյական» կեղծ բառակապակցությունը:

Եվ ինչո՞ւ է, օրինակ, (գեղագիտությունը) ավելի վատը, քան բարոյականությունը, ավելի քիչ փրկագործական, մարդու և աշխարհի էլույթումն իրենով ավելի նվազ պայմանավորող, չէ որ մեղանչումը կարելի է նաև (գեղագիտորեն) մեկնաբանել, իբրև տիեզերական գեղեցկության կործանում, իբրև անկում էսթետիկական ներդաշնակությունից մեղքը կարելի է այլանդակություն նկատել, որի համար մեծ հիմքեր կան գեղեցկությունը՝ փրկության ճանապարհ, որի վերաբերյալ օրինակներ կան հենց Ավետարանում: Ծառ են խոսում դիվական, անաստվածյան էսթետիկայի մասին, բայց ճշմարտություն է, որ բարոյականությունն էլ կարող է ոչ պակաս դիվական և անաստվածյան լինել: Ծշմարիտ է, որ կրոնի զուտ էսթետիկական ըմբռնումը կամքում մեծ անկարգությունների կարող է հանգեցնել, մեր էմպիրիկական կեցության անկայունությանը, բայց դա (օգտապաշտ) պատկերացում է, կրոնի համար գոյություն չունեցողը: Ինձ նույնիսկ կրոնի մեջ (փորձով ստուգելը) նվազ վտանգավոր է ներկայանում, քան բարոյականությունը, նվազ պարտադրական, նվազ ընդունակ հակակրոնական բարոյական հնքնաբավության վերածվելու:

Անշուշտ, Քրիստոս ավելի շուտ եկավ մեղավոր Օսկար Ռայլի փրկության համար, քան այն բարոյական կեղծավորների, որոնք նրան քարկոծում էին. Քրիստոս այցելել է Ռայլիին բանտում: Մենք շատ կարիք ունենք կրոնական կյանքի էսթետիկական թարմացման, բայց կրոնի մեջ վերացական էսթետիզմն էլ այնպես սխալական է, ինչպես և վերացական բարոյականությունը: Գեղեցկությունն ու բարին կեցության սկզբնաբրյուրում մի են և միայն միատիկ աղբյուրն է իրավունք տալիս ինչպես գեղեցկությանը, այնպես էլ բարուն:

Գեղագիտությունը և բարոյականությունն ինձ համար բացարձակ համարժեք են և միանման ենթակա գերագույն կրոնական սկզբին: Մեղանչումը ո՞չ բարոյական և ո՞չ էլ գեղագիտական փաստ է, ինչպես նաև ո՞չ էլ ինտելեկտուալ, այլ կրոնական, կեցության անկում, որում վնասված է և՛ գեղեցկությունը, և՛ բարին, և՛ ճշմարտությունը: Փրկության ճանապարհը ո՞չ բարոյական է և ո՞չ գեղագիտական, այլ կրոնական, որին իբրև մասեր ենթակա են և՛ բարին, և՛ գեղեցկությունը: Փըրկության ճանապարհը՝ Քրիստոս է և ոչ թե բարոյական օրենքը կամ մարդկային բնական կատարելությունը: Մարդկության փրկությունը միատիկ - կեցութային փաստ է, ազատության և սիրո խորիրդավոր ակտ, գերբարոյական և գերոացիոնալ: Դրանով, իհարկե, բնավ չեն մերժվում բարոյականության պայմանական և Բարաբերական իրավունքները, որը ստորադաս պետք է լինի գերագույն կրոնամետաֆիզիկական սկզբին, այսինքն՝ ոչ թե բարոյականությունն է հաստատվում, այլ՝ գերբարոյականությունը՝ կրոնական բարոյականությունը: Բարոյականությունը կրոնական կյանքի մասն է, նրա անկապտելի տարրը: Կրոնը, որը չէր հանգեցնի նոր բարոյականության, բարոյական վերածննդի, անկենսունակ և անպետք կլիներ: Բարոյախոսները կրոնի մեջ պետք է այն հանրաճանաչ նոգերանական փաստի առաջ կանգ առնեին, որ բարոյականությունը և կրոնականությունը չեն համընկ-

նում, բարոյական մարդիկ հաճախ կրոնական չեն լինում և նովածիսկ՝ զորկ ամեն տեսակի կրոնական գգացումից, իսկ հզոր կրոնական ապրումներով կրոնասեր մարդիկ երբեմն բավականաշափ բարոյական չեն լինում, շատ հաճախ օրինագանցներ են հանդիսանում: Ավելի խորը թափանցումը կրոնականության հոգեբանության մեջ պետք է մեզ այս ճշմարտությունը ուսուցանի, որ մարդիկ կրոնին միշտ չեն, որ բարոյական մոտիվներով և նկատառումներով են դիմում, որ բարոյականության հաճեակ հակումի բացակայությունը, ինտաքրքությունը չտածելը, փրկության անբնարինությունը «բարոյական» ճանապարհով հաճախ կրոնական ճանապարհին են հանգեցնում, գերմարդկայինի ծարավին, իսկ «բարոյական» բնությունը, բարոյականության հաճեակ հակումը երենման փակում են կրոնական ճանապարհը, այն կարծես թե ավելորդ են դարձնում, կարծես թե փակում են կեցության ողբերգական հաճախ կրոնական որոնումի և կրոնական գիտակցության հոգեբանական հիմքը կեցության ողբերգականության, բուժման համար սոսկ մարդկային միջոցների, միայն մարդկային բարոյականության անբավարարության, միայն երկրային իրերի խղճուկության ապրումն է: Օրենքը կատարելու մեջ չեն, բարոյական պահিষածի մեջ չեն կրոնականության էլույթունը, այլ ուրիշ աշխարհների մեջ խորասուզման, վերերկրային լուսը տեսմելու շամապության: Քրիստոս սեր քարոզեց և ոչ թե բարոյականություն կամ վերացական պարտավորություն:

Բնութագրական է, որ կրոնի մեջ բարոյախոսները, հաստատուն բարոյական հակումների տեր մարդիկ սովորաբար ողբերգությունից չեն եկնում և նովածիսկ քիչ զգացմունքային են դրա հաճեակ. ողբերգական խզումները ու ձախողումները նրանց բավականաշափ «բարոյական» չեն թվում, բայց հենց կրոնի մեջ նրանք կցանկանացին սաստկացնել ողբերգությունը իրու բարոյական պարտավորություն, իրու ինքնախոչտաճրման պարտք, իրու բարոյա - կրոնական սիրանը: Ողբերգությունից չեն եկնում (բարոյական հավասարակշռությունը չափազանց մեծ ողբերգությունից է փրկում), բայց հենց կրոնի մեջ ողբերգության են հաճում, իրու բարոյական իմպերատորիկ: Մենք կատարելապես հակադիր ուղիներով ենք ընթանում, ավելի շատ իրերի բնությանը համապատասխանող: Դոստուկին բացահայտեց կրոնական հոգեբանության տրամացենդենտ խորը և բոլորից լավ ցուց տվեց կրոնի բարոյական մեկնաբանության անկայունությունը: Մենք եկնում ենք մեր կեցության խորը ողբերգականության փաստերից, իրերի իմաստն ենք փնտրում և կրոնի մեջ ողբերգականության վերացմանը, ողբերգականությունից կրոնական ելքի ենք հանգում: Ասկետիկ և բարոյականացնող պատմական քրիստոնեությունն ասում է. Քրիստոս խաչի վրա մահացավ և հարություն առավ, այդ պատճառով մեր կրոնական կյանքը անվերջանալի ողբերգություն է, այդ պատճառով մեր կյանքը ինքնախոչտաճրում պետք է լինի: Բայց կարելի է ասել. Քրիստոս խաչի վրա մահացավ և հարություն առավ, այդ պատճառով համաշխարհային ողբերգությունը հաղթահարված է, այդ պատճառով մենք փրկված ենք, երբ մեր ներսում ենք ընդունում Քրիստոսին, երբ միավորվում ենք նրա հետ և մեր կրոնական կյանքը բերկրալից է: Կրոնական կյանքին մեր մերձեցմանը համաշափ նվազում է ողբերգութ-

յունը, կյանքի սարսափը, վիշտն ու տառապանքը, աճում է բերկրանքը, կյանքի հմաստի զգացողությունը, փրկության նախազգացումը: Սարսափը չէ, որ հզորանում է իմ մեջ, երբ ես լսում եմ Աստծու ձայնը և Նրա թես միավորվում՝ սարսափը չքանում է: Կրոնը կեցության վերջնական բերկրանքի տրամացենդենտ զգացողությունն է: Ողբերգությունը, սարսափը, վախը՝ կրոնական կյանքի մեջ չեն, այլ պրանից դրուս, կրոնական կյանքի դեռևս ոչ բավարար իրականության մեջ: Ողբերգական թախիծը չի լիք մեզ մինչև վերջին պահը, աշխարհի չարը հավատացյալների հանդեպ հալածամբ է հարուցելու, բայց կրոնական ուրախությունը կաճի: Քրիստոս եկավ մենավորների մոտ, սիրեց նրանց և մեռի ողբերգությունն իբրև կրոնական փորձություն գնահատեց, քարոզեց փրկություն և ազատագրում տառապանքից, փրկեց մարդկանց և ոչ թե տանձեց նրանց: «Եվ եթեն մենքը լսի իմ խոսքերը և չպահի դրանք, ես նրան չեմ դատապարտի, քանզի չեկա, որ աշխարհը դատապարտեմ, այլ՝ որպեսզի փրկեմ աշխարհը» (Հովհ. ԺԲ 47): Մարդկությունն իր համար նոր գիտակցություն ստեղծեց, Քրիստոսի ճշմարտությունն ավելի լավ բացահայտող, քան դա արել էր պատմական քրիստոնեությունը: Այստեղ մենք մոտենում ենք ժամանակակից կրոնական ճգնաժամի համար հիմնական դարձած ասկետիզմի խնդրին:

Չուտ բարոյական պաթուը ժխտական է, այն ստեղծագործական չէ, այն ժխտում է իր մեջ չարը և այդ ժխտման մեջ է տեսնում բարի՞՛ խոսափելով չարից, իսկ բարին դրական անելիք չունի: Բավականաշափ ուշադրություն չի դարձվում բարոյականության գուտ ժխտողական բնույթի, նրա սանձահարող, սահմանափակող, զսպող միտումների վրա, ինչպես նաև կրոնի դրական ստեղծագործական բնույթին: Ասկետիզմը բարոյականության հետ է կապված: Ասկետիզմը կյանքին թշնամի, մարվանը սիրահարված յուրահատուկ կրոնական մետափիզիկա է: Մերժման ուղին ընտրած, դրական ճանապարհից հրաժարված ասկետիզմը հիվանդագին (երկվության) արդյունք է, բաժանում երկնքի և երկրի, հոգու և մարմնի, տրամացենդենտի և իմանենտի, հավիտնականի և ժամանակավորի, հանդերձյալ կյանքի և երկրավոր կյանքի միջև:

Պատմական սահմանափակության ուժով ասկետիկ գիտակցությունը փորձում է հայթել մահին հենց մահվամբ, կյանքի ողբերգությունը՝ ողբերգության զորացումով, վերափոխել երկիրը՝ նրա վերջնական մերժմամբ, ազատագրել մարմնը՝ նրա վերջնական մահացությամբ: Պատմական քրիստոնեության մեջ այդքան հզոր ասկետիզմը Աստված-Բանի մարմնացումը չի ընդօրինակում և ոչ էլ Նրա՝ աշխարհը փրկող հարությունը, այլ բացառակես Քրիստոսի մահը, խաչելությունը: Ըստ էության մոայլ ասկետիզմի համար Քրիստոս ամենից քիչ է Փրկիչ, ամենից քիչ է մահը հաղթող, այլ ավելի շուտ՝ մահացության ուսուցիչ: Ծատ հաճախ պատմական քրիստոնեության համար Քրիստոս ոչ թե Ազատագրում և Սեր էր Անրկայանում, ոչ թե Աերքուատ էր ընդունվում, այլ դեռևս ինքնախոչտանգման կոչ անող արտաքին ուժ էր թվում: Միայն որոշ ընտրյալներ են մտերմիկ հարաբերություն ունեցել Քրիստոսի հետ, սիրո կապ մերձավոր էակի հետ. իշխող գիտակցության մեջ ապրել է հեռավոր Աստված, ոչ այնքան բերկրանք պարգևող, որքան վախենալող:

Հետևողական ասկետիզմն իբրև սկիզբ՝ «վերացական» ասկետիզմ է, միջոցից նպատակի է վերածվել, իսկ քրիստոնեության պատմության մեջ այն շատ հաճախ հատկապես արդաշին է համասացել, պետք է հաշտվի աշխարհում եղող կեղծիքի և չարիքի հետ, պետք է դիմանա դիվական բռնությանը, քանի որ այդ չարիքի մեջ տառապանքի, սխրանքի համար լրացուցիչ առիթ է տեսնում, քանի որ կեղծիքով է հագենում ինքնախտշտանգման ծարավը: Ասկետիկ կրոնասիրությունն իր մեջ աշխարհի, ինչպես նաև երկրի վրա Աստծու Արքայության հաղթանակի համար պայքարելու կարողություն չունի, քանի որ ասկետիկ մտածողության համար ազատությունն ու երկրային ճշմարտությունը կնվազեցնեն տառապալից սխրանքի առիթների քանակը, կարծես թե ավելորդ կդարձնեն ինքնախտշտանգումը:

Ասկետիզմը չի կարող բավականանալ առանց չարի, աշխարհում չարի գոյության, չարի գայթակղության իրողությամբ է ապրում, որի դեմ պետք է պայքարի, ահա թե ինչու է հրա պաթուսը նշանակալից չափով գիրիշատական, բուրդիստական: Ասկետիզմը՝ պեսիմիստական և համաշխարհային կյանքին թշնամին, միշտ ավելի շատ չարի գորությանն ու իրականությանն է հավատում, քան` բարու զորությանն ու իրականությանը, ավելի շատ ստանային է մոտ գտնվում, քան` Աստծուն: Իրական, ստեղծագործական կրոնական միստիկան պետք է հանգեցնի չարի պատրամքայնության ու ոչնչության և Աստծու իրականության ու հզորության գգացողությանը: Ասկետիկ կրոնականությունն ի զորու է միայն պայքարելու մարդու միջի անհատական չարի դեմ, բայց համաշխարհային չարից այն կարող է միայն երես թերթի, դրա պատճառով այն կարող է միայն տառապել. այն գործ չունի տիեզերքի հետ, աշխարհի վերափոխման, աշխարհի ազատագրման և երկրի վրա ճշմարտության հաղթանակի հետ. այդ հին կրոնականությունն անհատական է այդ բարի վատ իմաստով, այն ընդհանրական չէ լավ իմաստով, այլ սուկ հեղինակության հպատակությանն է տեսնում: Մոռանում են, որ Քրիստոս հնքն իրեն չխաչեց, այլ Նրան այս աշխարհի չարը խաչեց, որին նա եկել էր հաղթելու: Ուզում են, որ ինքներս մեզ խաչենք, չարի գործունեությունը մեր Ակատմամբ մեզանից կախվենք: Այս, մենք պետք է կրոնական ճշմարտության համար խնդրությամբ մեռնենք, երբ այս աշխարհի չարը սկսի մեզ խաչել, բայց ինքներս չխաչենք, մեր Ակատմամբ չարի այդ դերը չկատարենք: Սիրել կյանքի իմաստն ամեն ինչից առավել և այդ ազատ ստեղծագործական սիրով այդ իմաստի հանդեպ գործվող ամեն տեսակի թշնամականը հեռացնենք. ահա մեզ պատվիրված միակ արդար ասկետիզմը: Պետք է Քրիստոսի օմանվել և ոչ թե նրանց, ովքեր նրան չարչարեցին ու խաչեցին: Քրիստոս կյանք է, կյանքի հաղթանակ մահվան հանդեպ, մարմնավորվենք և մեր ու տիեզերքի մեջ իմաստն ու Լոգոսը մարմնավորենք, պետք է հպատենք մեր և ողջ երկրի հարությունը: Մահվան սկիզբը Քրիստոսի մեջ չէ, ինչպես, ավաղ, շատ հաճախ քրիստոնեությունն է կարծել պատմության ընթացքում իր հոգեմանգաւոյան և թաղման պաթոսով, այլ՝ համաշխարհային չարի: Մեր ուղղափառ հոգեմանգիստը ինչոր միստիկ սիրահարություն է մահվան քաղցրությանը, և նրանում ոչ թե կյանքը,

այլ մահվան կրոնն է զգալի: Բայց ասված է. «Աստված մեռելների Աստված չէ, այլ կենդանիների» (Մտթ. ԻԲ 32. Մրկ. ԺԲ 27, Ղուկ. Ի 38), «Թուզ տուր, որ մեռելները թաղեն իրենց մեռելներին» (Մտթ. Ը 22): Գողգոթան ո՞չ տառապանքի աստվածացում էր, ո՞չ տառապանքի քարոզ՝ իրոն գերագույն բարոր, այլ հաղթանակ տառապանքի համեմատ:

Քրիստոսի տիեզերական զոհաբերությունն ազատեց զոհեր մատուցելուց և ընդմիշտ մերժեց Աստծո՛ իրոն զորության հանդեպ Վերաբերմունքը, որի գթասրտությունը պետք է շարժել: Կրոնականության պատմականորեն սահմանափակված և մասնավոր ձևերում դեռևս Աստվածության իրոն օտար, մոայլ, գրեթե դաժան զորության, որին միայն արյունալի զոհերով կարելի է գթաշարժել, որը բարկությունը ողորմության սուս ինքնախոշտանգման պայմանով է փոխում, այս վաղեմի գիտակցությունն է ապրում: Հին, սահմանափակ մտածողությանը Աստվածությունը միայն զորության ասպեկտում է երևում, ահեղ զորության և փրկվելու համար մարդկանց ու կենդանիների արյունով էին ողորում երկիրը: Հեթանոսության և Հին Ուխտի մեջ քավության ծարավն արյունալի զոհով էր արտահայտվում: Սիրո Նոր Ուխտն արյունալի զոհն անարյուն Հաղորդությամբ փոխարինեց: Մութ ուժի պաշտամունքում հին մարդկության դաժանությունն ու Վայրագությունն են արտահայտվել: Ինկվիզիցիայի խարուկաներում, կրոնական հալածանքներում, միջնադարյան խոշտանգումներում դեռևս Աստված - Զորությանը արյունալի զոհաբերություններ էին մատուցվում: Բայց չէ որ Քրիստոսից և Նրա զոհաբերությունից հետո Աստված այլևս զորություն չէ, այլ՝ Սեր, օտար չէ, այլ՝ հարազատ, հեղինակություն չէ, այլ՝ ազատություն: «Եկեք ինձ մոտ բոլոր հոգնածներդ և բեռնավորվածներդ, և ես ձեզ կհանգստացնեմ», «Իմ լուծը ձեր վրա վերցրեք և սպառեք ինձանց, որ ձեզ եմ և սրտով խոնարի, և ձեզ համար հանգիստ պիտի գտնեք», «որովհետո իմ լուծը քաղցր է և իմ բեռը՝ թեթև» (Մտթ. ԺԱ. 28 - 30): Լծի հենց այս քաղցրության և թեթևության մասին են մոռացել բոլոր ժամանակների հավատաքննիչները: Կարծես թե մոռացել են, որ ձեզ և սրտով խոնարի Որդի Աստված մեզ մեր Հոր հետ է միավորել: Արյունալի մարդկային զոհեր այլևս չեն մատուցվում (այսինքն՝ գրեթե չեն մատուցվում, որովհետո դեռևս հեռևս հանուն «քարո» մարդկանց մահապատճի են ենթարկում), սակայն ոչ պակաս սոսկալի զոհեր են մատուցում զոհաբերություն կյանքի ողջ հարստությամբ, անհատական կեցության լրիվությամբ: Այս անարյուն, բայց սոսկալի զոհաբերություններին կրոնական սահման դնելու ժամը հասել է, և այդպիսի սահման կարող է լինել միայն առավել ամբողջական, նոր կրոնական մտածողությունը, որը վերջնականապես կճանաչի Աստծուն՝ մեր Հորը, անսահմանորեն մեզ սիրող՝ Ազատության Պարգևատուին, և կմերժի դաժան, մարդկանց խոշտանգող Աստծուն: Կյանքի արյունը կիսայթի մահվան արյանը, Հաղորդության խորհուրդը՝ Քրիստոս-Լոգոսի մարմնի և արյան հետ հաղորդությունը կիսայթի ինքնախոշտանգումին և այլոց խոշտանգման զոհին: Քրիստոս եկավ մեզ փրկելու և ոչ թե պատժելու, և մենք ուզում ենք սիրել Նրան ոչ հանուն վախի: Երկուուն ու պաշտամունքը պետք է հաղթեն վախին ու հապատակությունը: Աստված մեզանից ստեղ-

ծագործություն է պահանջում, ստեղծագործող ազատ սեր և ոչ թե զոհաբ ու տառապահը: Եվ եթե ես ինչ-որ բանի ամխոս հավատում եմ, ապա դա Աստծու բարությունն է, նրա սերը և մեր՝ իբրև իր զավակների հանձեա բարեգործությունը, ազատությունը, որը նրա հետ միավորում է մեզ, և ավելի շուտ ես պատրաստ եմ կասկածելու նրա գորության և ամենակարողության վրա, քան նրան դաժանություն և խստություն վերագրելու: Աստված դաժան է, սարսափելի, Աստված իշխանություն է, Աստված հեղինակություն է. դա մարդկության առաջին օրերի տեսողության տկարությունն է, երևակայության արարեկվածությունը, սեփական գազանայնության սահմանափակ արտացոլումը: Մեղանչումից հետո մարդիկ հեռացան Աստծուց և մերքուատ իրենց օտարացած նրա գորությամբ ապշանքը՝ ամեն Աստծու կերպարանք ստացավ: Սակայն կրոնի գլխավոր Զապատակն է՝ խթանել ամեն տեսակի վախ, և անվեճելու, անվախ վերաբերմունք հաստատել կյանքի նկատմամբ: Զարգացած և լիակատար կրոնական գիտակցության համար Աստված ոչ թե զորություն է, այլ իմաստ, ոչ թե իշխանություն է, այլ սեր, ոչ թե անհրաժեշտություն է, այլ ազատություն: Աստծու և մարդու միջև հարաբերության խորհուրդն անարտայտելի է, իսկ որպես հպատակություն և սարսափեցում ամենից քիչ է արտահայտելի: Աստծուն մերձնալով, նրա հետ միավորվելով ես ազատագրվում և քերկրում եմ, Աստծուց հեռանալով՝ սորկանում և տառապում: Աստծու հետ միությունը կրոնական քերկրալից խորհուրդների մեջ է և ոչ թե բարոյական վարժանքների: Սա ստեղծագործական, ազատ ստեղծարար և ոչ թե բացասական-ճգնական գործնթաց է: Աստվածութացության հանցանքը հաղթահարվում է միայն Աստծու կամքի հետ դրական վերամիավորմամբ, Փրկչի հանձեա անսահման սիրով, նրա ուժքերն ընկալելով: Միջնադարյան վանականն իր հոգին աշխարհից փրկելով, ճգնավորության ճանապարհով գայթակղություններից երես դարձնելով, կյանքից խոսափելով իր խցում բացասական, չար կերպարներ էր հորինում և դրանցով տանջվում: Քրիստոնյա ճգնավորի առաջ գայթակղությունն էր հառնում, օրինակ՝ կնոջ չար կերպարը, նրա համար սատանան էր մարմնավորվում և այս բոլոր բացասական մարմնացումները նա իմքն էր հորինում: Նրա կրոնական խանդավառությունը բացասական կերպարներով, գայթակղություններով և փորձություններով էր սակում, նա ապրել չէր կարող առանց «չար» մարմնի, «չար» երկրի: Մեր ժամանակաշրջանի մարդիկ դեռևս այդ երկությամբ, այդ գայթակղություններով և փորձություններով են թունավորված և, քրիստոնեական հավատքից ազատված լինելով, դեռ քրիստոնեական սնուտիապաշտություններով, պատմական քրիստոնեության ժմաստղականությամբ (Ցիրիլիզմով) են համակված: Մարդկությունը պեսը է անցներ ճգնավորության միջով, նրանում իսկական ողբերգություն կար: Անկարելի է ժմաստղականությամբ մարդիկ դեռևս այդ երկությամբ, այդ գայթակղություններով և փորձություններով են ժմաստղական համակված: Մարդկությունը պեսը է անցներ ճգնավորության միջով, նրանում իսկական ողբերգություն կար: Անկարելի է ժմաստղականությամբ միջով, նրանում իսկական համաշխարհային նշանակությունը: Նրանց մեջ մարդու աստվածացումն էր կատարվում: Սակայն պատմական եկեղեցու ճգնավորությունը դաժան և արյունություն է, նրա սպասավորները հաճախ են կյանքն անհում, արդարացնում են մահապատիժներն

ու բռնությունները՝ սրբապղծորեն քողարկվելով Նրա անվամբ, Ով սեր էր և ազատություն և կյանք՝ անվախճան կյանք: Արավասիկ ասկետիկ գիտակցության սարսափելիությունը, ահա մին կրոնակամության Նևմեսիդան:

Բայց չէ որ մի ուրիշ ճանապարհ կա: Դրական կրոնական կյանքի և կամքի, առ Աստված ստեղծագործական պողոքումների մեջ կարող է հավերժական կանացիության, աստվածային գեղեցկության կերպարը հայտնվել: Վլ. Սոլովյովը կիսով չափ մին, ասկետիկ և բարոյականացնող կրոնական գիտակցությանն է պատկանում, բայց նրանում նաև չափ բան նոր, մարգարեական է: Նրա անձնական կյանքի ամենաապաշեցուցիչ հրորությունը դեպի Եգիպտոս նրա ճանապարհորդությունն է՝ անապատում «գեղեցիկ կնոջ» հետ նրա համդիպումը, Ակարագրված նրա «Երեք հանդիպում» բանաստեղծության մեջ: Կերպարը «Գեղեցիկ կնոջ», հավերժական կանացիության կերպարը չափ գայթակություն կամ փորձություն չէ, այլ դրական ճանապարհով Աստծու հետ միավորվելու միստիկ փորձառություն, սա չարի Ժխումը չէ, այլ բարու ստեղծարարություն: Մի ուրիշ հիմնալի բանաստեղծության մեջ Սոլովյովն ասում է.

Հավերժական կանացիությունն այսօր
Անաղարտ մարմնով երկիր է ընթանում,
Անմար լուսում նոր դիցութուն
Երկինքն է ծովանդունին միաձուվում:

Ինչ աշխարհիկ Աֆրոդիտեի գեղն է կազմում,
Որ բերկրանքն է տների և անտառների ու ծովերի.
Ողջը կրամատեղի գեղն աներկրային
Առավել շինչ, զորեղ, կայտառ, անթերի:

Իսկ պատմական երկրային եկեղեցում ո՞ր է երկնային Աֆրոդիտեն: Հին աշխարհիկ Աֆրոդիտեի ունաւությանը հաղթող հավերժական կանացիությունը անշտապ դեպի աշխարհ է ընթանում: Պատմական քրիստոնեության մեջ չկա «տների, անտառների և ծովերի բերկրանքը»: Մենք այդ «բերկրանքին» ենք սպասում: Ավելի շատ բերկրալից համդիպումներ, ավելի շատ ստեղծագործական մերձեցումներ Համաշխարհային Հոգու հետ, սրանցում է ճշմարիտ կրոնական կյանքը, իսկական միստիկ փորձառությունը: Բարոյա-ճգնական կրոնասիրության սարսափելիությունն այն է, որ նրա համար բաց է չարի, սատանայի հետ միավորվելու միստիկ փորձառությունը, բայց գրեթե փակ է Աստծու հետ դրական միավորման միստիկ փորձառությունը: Ընորի չկա, հաղորդակցության բերկրանքը իր Աստծու հետ, կրոնական մտերմություն չկա, կրոնական կյանքն աղքատ է դրական բովանդակությամբ: Քրիստոնեության պատմությունը մեծ մի կերպար է ճանաչում, որի մասին հարկ էր հաճախակի հիշեցնել բոլոր մոլեռանդներին, Ֆրանչիսկոս Ավիզացու՝ Քրիստոսին ամենակատարյալ ըմիօրինակողի կերպարը: Երբ Ֆրանչիսկոս Ասի-

զացին հայտնվում էր, բերկրանք էր ծնվում, գրանից լուսապատճի լուսն էր տարածվում, գագանները հանդարտվում էին, բնությունն Աստծո հետ էր միավորվում, երկիրն այս շնորհալի մարդու հայտնվելուց վերափոխվում էր: Իսկ ահա պատմական քրիստոնեության առավել բնորոշ ներկայացուցիչ Սավոնարոլան արտափ էր ներշնչում, ինքնախոշտանգման էր կանչում: Պատմական Եկեղեցու մեծ ոճիրներն ընդում ազատության, անձի, մշակութի, Եկեղեցու, հակաքրիստոնեական դաժանությունը բխում են ճգնավորության սխալ ընթանումից, թյուր կրոնական մարդաբանությունից կամ դրա լիակատար բացակայությունից: Սակայն հանուն մեծ արդարությունից կամ դրա լիակատար բացակայությունից:

Հայոց սա այն ճգնավորությունը չէ, որում մեմբ կրոնական կյանքի ժամանական ենքն տեսնում, սա նպատակի վերածված, վերացական ճգնավորություն չէ, ինքնախոշտանգման, խավարի և ստրկության ճգնավորություն չէ: Ֆրանչիսկոսի մոտ ճգնավորությունն այնուամենալիք ենթակա էր գերազուն, դուական, ատեղծագործական սկզբունքի, նա սիրում էր իր հարսնացուի՛ աղքատությանը, որովհետև տեսնում էր նրա անհամար հարատությունները: Ֆրանչիսկոս «աղքատ» էր, բայց «Աստծու աղքատն» էր և ոչ թե սատանայի, ինչպես ուղիղ մոռայ ճգնավորները, որ անդրյությունը սիրեցին: Նա սիրում էր բնությունը և գագաններին, բերկրում էր սիրով, սիրությամբ էր տափակացնությամբ բերկրալից և լուսավոր արվեստի, գեղեցկությամբ լեցուն կյանքի կրոնական ստեղծագործության մեջ: Բայց աշխարհի, տիեզերքի «մարմնի» կրոնական այն հաստատումը, որին սպասում ենք քրիստոնեության պատմության մեջ, դեռևս չկար: Հաճախ էին փորձ անում միավորել կրոնական ոգին փորձային (Էմպիրիկ) մարմնի, ֆիզիկական կյանքի հետ, բայց միստիկ, կրոնական նվիրագործված մարմին դեռևս աշխարհի քրիստոնեության պատմության մեջ չկար: Ժամանակակից գիտակցությունը դժվարությամբ էր ընթանում, որ այժմ խոսքը «մարմնի» որպես միստիկ տիեզերքի մասին է, այլ ոչ թե՝ ֆիզիկական երևույթների, փորձային (Էմպիրիկ) նյութի: Ասկետիկ դուալիզմը հատուկ կար-

գի մանիքեականություն էր, որն ընդունում էր, որ Այութի ինքնուրուզ մետափիզիկական սկիզբ չար է, Աստծուն հակառակ: Բայց չարիքի ակունքը ոչ թե «Այութի», այլ մասնատվածության, անմիաբանության մեջ է համաշխարհային կենտրոնից՝ իմաստից անջրպետման արդյունքի: «Մարմն» հաստատուն նվիրագործումը կապված է աստվածամարդության՝ մարդկության աստվածացված մարմնի գաղափարի և համաշխարհային պատմության իմաստի հետ:

Քրիստոս ինքը ճգնավոր չէր: Նրա կյանքում մոալլ ինքնախոչտանգման ոչ մի գիծ չկա: «Եկավ Մարդու Որդին. ուստում է և խմում. և ասում են՝ ահա ուստող և խմող մարդ, բարեկամ՝ մաքսավորների և մեղավորների» (Մատթ. ԺԱ. 19): Քրիստոս խնջույքների էր հաճախում, գինի խմում, մեղավորների հետ շփվում և փարիսեցիներին ասում. «Մաքսավորները և պոունիկները ձեզանից առաջ պիտի հասմեն արքայություն» (Մատթ. ԻԱ. 31): Քրիստոս պայմանական աղքատություն էր ուսուցանում հանուն վայրի շուշանների լիակատար հարստության: Քրիստոս օրինեց կրոնական կյանքի պերճանքը, երբ մեղավոր կինը թանկարժեք յուղով իր ոտքերն էր օծել և իր մազերով սրբում էր դրանք: Այս շուայլությունը Քրիստոս բարձրադասեց աղքատներին օգնելուց: Սակայն համաշխարհային պատմության միստիկ դիալեկտիկայի մեջ ծածուկ խորագույն պատճառներով՝ քրիստոնեական դարաշրջանում կրոնական ճշմարտության լրությունը դեռևս չէր բացվել և պատմության ընթացքում չէր առարկայացել: Քրիստոնեությունը հեթանոսությանը հակադրությացաւական-միակողմանի բնույթ ձեռք բերեց և նախատեղի համաշխարհային տարերքից երես դարձրեց: Գիտակցված մահացումի, Գողգոթայի ընդօրինակման դարեր պետք է անցնեին, Եփրեմ Աստրին և քրիստոնյա ճգնավորներն իրենց հրաժարման միստիկ սխրանքը պետք է գործնեին, որպեսզի մարդկությունը նոր կյանքի վերակոչվեր, որպեսզի այն հարության ճանապարհով ընթանար: Միշնադարյան կրոնական գիտակցությունն ի զրոյու չէր միավորել և հաջտեցնել ճգնական վանականության իդեալը, անձ, անձնական պատիկ և ընդդեմ չարիքի՝ դեպի աշխարհ ուազմական արշավանք հաստատող ասպետության իդեալի հետ: Կրոնական իդեալը մնաց երկակի: Եթե Վերածննդի դարաշրջանը վերադարձ էր դեպի հեթանոսության ճշմարտություն, դեպի երկրային կյանք, ապա մեր ժամանակաշրջանը սկիզբն է կյանքի կրոնական իմաստի վերածնության, քրիստոնեական ճշմարտության հետ հեթանոսական ճշմարտության միավորման, աշխարհի միստիկ հիմքում դիալեկտիկ հեղաշրջման հետ կապված նոր դարաշրջանի:

Բարոյա-ճգնական ժուկալումն ու բացատումը ինքնին դեռևս կրոնական կյանք չէ, որովհետև այս կյանքն այլևս շարունակ շնորհալից է, շարունակ Աստծու հետ դրական և բերկրալից հաղորդակցություն է: Կրոնական կյանքի հիմքում ոչ թե բացասական սխրանքն (բարոյական զոհ, տառապանքներով ինքնախոչտանգում) է ընկած, այլ՝ դրականը, լուսավոր կերպարների ստեղծարարությունը, աստենական կյանքի սահմանափակությունից և ստրկությունից ազատագրումը, Աստծու մեջ մարդկային աստվածացումը: Կրոնն անհաջու հակադրությունների ողբերգությունից և տանջանքից ելքն է, երկրի և երկնքի, մարմնի և հոգու, մարդկության և Աստ-

ծու, անհատի և ունիվերսումի միավորման սկիզբը: Բանը ճգնական ժուծկալման և գեղեցնյան բավարարման մեջ չէ, այլ՝ անձնավորություն լինելու, աստվածային Տիեզերքում սեփական միստիկ եւր հաստատելու: Նոր միստիկան, որին հանգում են ժամանակակից հոգու ճգնաժամ իրենցով անդրադարձնող «դեկադենտները», այլ աշխարհների հետ հաղորդակցության դրական փորձառությունը, միստիկ զգացողության փորձն է կիսարաց անում, և օրա ծառայությունը հին. մեզ համար չափազանց նեղ կրոնական գիտակցության, վերացական ճգնավորության և վերացական բարոյախոսության քննադատության մեջ աներկրայելի են: Մենք միստիկ կրոնավորությունը չեն, որ մերժում ենք: Ոչ յեն կրոնը պետք է բարոյախոսական լինի, այլ բարոյականությունը՝ կրոնական և միստիկ: Բայց որպեսզի ժամանակակից ճգնաժամից, որը մշտական ողբերգության վերածվելու վտանգին է ենթակա, կրոնական եթք տեղի ունենա, անհրաժեշտ է կուրությանը սիրահարված միստիկան հաղթահարել, պետք է մերժել աղոգմատիկ միստիկայի հավակնությունը:

Ո՞ՌԱԵՐԵՆԻՑ թարգմանեցին՝

**ԳԵՎՈՐԳ ԱԲԴ. ՍԱՐՈՅԱՆ
ԱՐԱՄ ՄՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**